Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 6-ի N 214 - Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏՎՅԱԼՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից (այսուհետ՝ ռեգիստր) Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող տվյալները, դրանց տրամադրման կարգի և ժամկետների հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները տվյալներն ստանում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարաններից (այսուհետ՝ մարզպետարան): Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները տվյալներն ստանում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից (այսուհետ՝ վարչություն):

3. Ռեգիստրը յուրաքանչյուր կիսամյակից հետո 5-րդ աշխատանքային օրը մարզպետարանին (Երևանի քաղաքապետարանին) է տրամադրում յուրաքանչյուր համայնքի ռեգիստրում հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված անձանց (այդ թվում՝ անչափահաս) մասին հետևյալ տվյալները՝

1) համայնքում հաշվառված անձանց անունը, հայրանունը, ազգանունը, հաշվառման հասցեն.

2) սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

3) քաղաքացիությունը (երկքաղաքացիության դեպքում՝ նաև այլ պետության քաղաքացիությունը).

4) կարգավիճակը (կացության կարգավիճակը կամ փախստական լինելը).

5) հաշվառման ամսաթիվը.

6) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ քրեակատարողական հիմնարկում գտնվելու դեպքում՝ նշում դրա մասին:

4. Ռեգիստրը յուրաքանչյուր կիսամյակից հետո 5-րդ աշխատանքային օրը մարզպետարանին (Երևանի քաղաքապետարանին) է տրամադրում յուրաքանչյուր համայնքի ռեգիստրի հաշվառումից հանված անձանց (այդ թվում՝ անչափահաս) մասին հետևյալ տվյալները՝

1) համայնքում բնակության վայրի հասցեով հաշվառումից հանված անձանց (այդ թվում՝ անչափահաս) անունը, հայրանունը, ազգանունը.

2) սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

3) հաշվառումից դուրս գալու ամսաթիվը:

5. Սույն կարգով սահմանված տվյալները, ըստ համայնքների, համապատասխան մարզպետարաններին (Երևանի քաղաքապետարանին) տրամադրում է վարչությունը՝ էլեկտրոնային կրիչներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ